
ԱՂԲՅՈՒՐ



ՊԻՈՆԵՐ

1.2025

ԱՂԲՅՈՒՐ

Մանկապատանեկան ամսագիր

Հրատարակիչ՝
«ԱՂԲՅՈՒՐ» ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ» ՍՊԸ,
վկայական՝ 02Ա 050591
Լույս է տեսնում 1923 թվականից
Վկայական՝ 1174
Գրանցման համար՝ 286.110.04218
Հեռ. 091 59 38 13
էլ. հասցե. aghbyur@yandex.ru

ԱՅՍ ՀԱՄԱՐՈՒՄ. №1. 2025

ԱՐԱՄ ՍՏԵՓԱՆՅԱՆ
«Որ մենք էլ փրկվենք» 2
Գ. ՊՈՂՈՍՅԱՆ
Վերարկուիս մասին 5
ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ ՄԵԾԵՐԻՑ 9
ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒՄ ԵՆ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԸ 10, 15, 26
Ա. ԻՍՐԱՅԵԼՅԱՆ
Հավերժական զրուցակիցներ ՌԵՅ ԲՐԵԴԲԵՐԻ 12
Երգարան «ԱՂՎԵՍ» 18
Թ. ՀԱԿՈԲՅԱՆ
Խաղաղության գույները 22
ԳԻՏԵ՞Ք, ՈՐ... 24
Հետաքրքրասերի էջ 28
Խաչբառ 31

Համարում տողադարձերը կատարվում են համակարգչային ծրագրի օգնությամբ, և հնարավոր են սխալներ:

Գլխավոր խմբագիր՝
ԹԱԴԵՎՈՍ ՏՈՆՈՅԱՆ

Շապիկին.
Դիմերեսին՝ **ԷՐԻԿ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ**, ՆԱՄ
Դարձերեսին՝ **ԱԼԵՔՍ ՆԻԿՈՂՈՍՅԱՆ**,
Մասիսի գեղարվեստի դպրոց

«ՈՐ ՄԵՆՔ ԷԼ ՓՐԿՎԵՆՔ»

ԱՐԱՄ ՍՏԵՓԱՆՅԱՆ

Մասնագիտության ընտրության հարցում Արամը կողմնորոշվել էր շատ վաղուց. պիտի բժիշկ դառնար ու պապի աչքերը բուժեր: Սկսել էր ուսումնասիրել կենսաբանություն, քիմիա և 2013 թ. ընդունվել է ԵՊԲՀ ռազմաբժշկական ֆակուլտետ: Արամի հոր պապը ևս բուժակ էր եղել: Երբ իմացել են,





ընտանիքի անդամները ուրախացել են, որ Արամը բժիշկ դառնալու որոշում է կայացրել:

Հետո կենտրոնական զինվորական հոսպիտալում բժիշկների հետ մասնակցում էր վիրահատությունների, ընտրել էր վնասվածքաբանություն մասնագիտացումը:

«Հետաքրքիրն էն է, որ ինքը դեռ բժիշկ չէր, բայց բոլորը որպես բժիշկ էին դիմում, մի օր ասեցի՝ ֆելդշեր ես, ինձնից նեղացավ, ասաց՝ մամ, բոլորն ինձ բժիշկ են ասում»,- պատմում է մայրը՝ Ջավահիր Եսայանը: Նա որդու հետ վերջին անգամ խոսել է հոկտեմբերի 1-ին: ***«Ասացի՝ քեզ լավ կնայես, ասաց՝ մամ, բոլորին հանեմ, կգամ»***,- հիշում է Արամի մայրը:

Արամը մորը զգուշացրել էր, որ երկու օր չի զանգահարելու, բայց հետո ուրիշի համարից նորից կզանգի:

Նույն օրը զանգահարել էր նաև հորեղբորը, զգուշացրել, որ իր հեռախոսին չզանգեն, քանի որ իրենց դիրքից նահանջել են, իսկ հեռախոսը մնացել է խրամատում:

2020-ի հոկտեմբերի 2-ին հրետակոծություն էր սկսվել, զոհեր և վիրավորներ կային, նահանջի հրաման էր տրվել. հրաձգային գումարտակը դանդաղ սկսել էր նահանջել, շարունակել էր վիրավորներին օգնություն ցույց տալ:

Արամը զոհվեց 2020-ի հոկտեմբերի 2-ի լույս 3-ի գիշերը՝ Ջրականի Նյուզգար դիրքից Նարինջներ դիրքի ճանապարհին. ԱԹՍ-ն էր հարվածել: Նույն օրը իր 11 հոգանոց դասակից զոհվել էին ևս հինգ զինվորներ:

Վերջին անգամ 25-ամյա բժշ-կին Ջրականի դիրքերում հանդիպել է կամավորական Պողոս Մրջումյանը: Նա վիրավորվել էր, երբ տեղափոխել են այն դիրքը, որտեղ եղել է բժիշկ Արամը:

Պողոսի խոսքով՝ Արամն է իր կյանքը փրկել, վիրակապել է, ցավազրկել: Հիշում է, որ ճակատին անունն է գրել ու ասել, որ մի քանի այլ վիրավորների հետ տեղափոխեն: Արամը մի քանի անգամ բարձր կրկնել էր, որ ինքը արտաշատցի բժիշկ Արամն է: Հայաստան վերադառնալուց հետո Պողոսը փնտրել է Արամ Ստեփանյանին ու հերթական վիրահատությունից առաջ պատահաբար Արամի ընկեր բժիշկներից հիվանդանոցում է իմացել վերջինիս զոհվելու լուրը: Սակայն Պողոսը փնտրել ու գտել է Ստեփանյանների ընտանիքը, պատմել, որ Արամն է եղել իր կյանքը փրկողը:

Արամ Ստեփանյանին հուղար-

կավորել են 2021-ի սեպտեմբերի 2-ին Եռաբլուր զինվորական պանթեոնում: «Միասին կռվել են, միասին էլ թող ննջեն»,- ասել է Արամի հորեղբայրը:

Արամ Ստեփանյանը հետմահու պարգևատրվել է ԼՂՀ-ի **«Մարտական ծառայության»** մեդալով:



ՊՈՂՈՍ ՄՐՋՈՒՄՅԱՆ

Ահա թե ինչպես է հիշում իր և Արամի հանդիպումը Պողոս Մըրջումյանը.

«Կյանքս փրկող ֆելդշերը տեսավ մարմինների մեջ, որ աչքիցս արցունք ա էթում ու... ինքն ա ինձ դուրս հանե՝ Ստեփանյան Արամը:

Հերոս տղա ա, շատ, հարյուրավոր մարդկանց ա փրկե... Ու որ էկավ, ճակատիս կարդաց՝ Պողոս, Արարատ... Ինքն էլ Արտաշատից ա, ասեց՝ էս իմ զեմլյակն ա, պիտի փրկեմ... հիշում էի ... իրա տագնապը.. էդ ժամանակ ամեն ինչ ուզում էի անեի, որ ինչ-որ մեկը օգնի ինձ, որովհետև էդ կռիվը մեջս կար ու.. որ բերեց, հագուստս հանեց՝ կտրելով սենց որոշ չափի, որ տեսավ վիրավորումս, հետ-հետ գնաց, նստեց, ասեց՝ չենք կարա փրկենք էս տղուն: Ես չէի կարում էդ ժամանակ խոսայի, ուզում էի՝ գոռայի, ասեի՝ ախպեր, կարաս, փրկի՛: Էդ ժամանակ որ տեսավ՝ լացում եմ ու... ասեց՝ չէ, պիտի փրկենք: Ու էդ ժամանակ կաթիլային միացրեց, հիշում եմ՝ չէր կարողանում՝ երակ չունեի էլ, որովհետև 6-7 ժամ օգնություն չէի ստացել: ... Ու սկսեց կռիվ անել իմ համար՝ էս տղուն պիտի դուրս հանենք ստեղից: Բայց հնարավորություն չկար դուրս հանելու, որովհետև ոչ մի տեխնիկա չկար, ոչ մի բան չկար, ոչ շտապօգնություն... Սնարյադների պայթյուններն էր լիքը լինում էր... Ասեց՝ բեէմպե կա, էս բեէմպեն էսինչ տեղն ա: Եթե բեէմպեով դուրս հանենք, կապրի էս տղեն: Ու բեէմպեն բերեցին, մի քանի վիրավորներ էլ կային, ինչքան հիշում եմ: Հենց բեէմպեի մեջ, ինչքան ուժ ունեցա, հավաքեցի, գոռացի՝ Նոր կտակարանս, որովհետև երբ որ պատերազմ էի գնում, կինս Նոր կտակարան բերեց, ու դրել էի ծոցագրպանս: Վազելով գնաց, շորերիս միջից Նոր կտակարանս ճարեց... արյունոտ... բերեց,դրեց կրծքավանդակիս, հետո հետ վերցրեց, ասեց՝ թող էս էլ մեր մոտ մնա, որ մենք էլ փրկվենք»:

Լուսանկարները՝
ՀԱԿՈԲ ՊՈՂՈՍՅԱՆԻ

ՎԵՐԱՐԿՈՒԻ ՄԱՍԻՆ...

Անցյալ տարի ամեն ինչ ուրիշ էր: Պապաս մեզ հետ էր ու նստած էր, այ, այնտեղ՝ իմ դիմաց: Հիմա աթոռը դատարկ է, իմ դիմաց ոչ ոք չկա. աթոռն է ու պատը: Մամաս փոքրիկ միջանցքի մյուս կողմում է նստած ու զրուցում է մանուշակագույն մազերով կնոջ հետ: Վերևում մի տղամարդ է պառկել, ես նրա դեմքը չեմ տեսնում, բայց խռմփոցը ականջներիս մեջ է ու խանգարում է գնացքի անիվների երգին: Անցյալ տարի ես ու պապաս միասին լսում էինք, թե ինչպես է գնացքը երգում: Հետո գյուղ գնացինք ամռանը, ու վերարկուս հետներս վերցնելու



կարիք չկար, որ մի հատ էլ կորցնեի: Ավելի ճիշտ՝ թողնեի կայարանի սպասասրահում: Մամաս ասաց.

- Գայանե, վերարկուդ հագիր: Կորցնելու ես:

- Շոգ է,- ասացի ես,- չեմ կորցնի:

Վերարկուս դրված էր ծնկներիս: Երբ գնացքի սուլոցը լսվեց, ես վեր թռա ու սկսեցի թռչկոտել: Արդեն մեծ եմ՝ 6 տարեկան, բայց ուրախանալիս թռչկոտելու ապուշ սովորությունը չեմ թողել: ...Եթե պապաս մեզ հետ լիներ, մամաս ստիպված չէր լինի մի ձեռքով երկու տոպրակ բռնել՝ իմ շորերը, ծմեռնուկ, տանձ, ծիրանի ջեմ ու տատիկի համար՝ դարչնագույն գուլպաներ: Մամաս թևիս կգցեր իմ վերարկուս, ու այն չէր ընկնի գետին, երբ ես սկսեի թռչկոտել գնացքի սուլոցը լսելուց հետո:

- Վերարկուդ ո՞ւր է,- ասաց մամաս, երբ գնացքն արդեն շարժվել էր ու արագացրել անիվների երգը: Ես նայեցի մամայի դեմքին: Ես միշտ նայում էի մամայի դեմքին, երբ ինչ-որ վատ բան էի անում ու ոչինչ չէի գտնում ասելու, որ պաշտպանեմ ինձ: Երբ պապաս ողջ էր, մամաս սկսում էր բարկանալ ու բացատրել, թե հատկապես ինչն եմ սխալ արել, ու ինչ հետևանքներ կարող է ունենալ այդ սխալը: Այս անգամ մամաս պարզապես տխրեց: Ու ես հիշեցի, որ ամեն ինչ ուրիշ է հիմա:

Գնացքը սլանում էր խավարի միջով: Ես մտածում էի վերարկուիս մասին: Հիմա վերակուս ընկած է կայարանի սպասասրահի հատակին ու շատ վախեցած է, քանի որ ոչ ես, ոչ մամաս այնտեղ չենք: Իսկ եթե ինչ-որ մեկը՝ մի չաղ հորեղ-

բայր, վազելով անցնելիս չի նկատել ու ոտքը դրել է վերակուիս վրա՞...

Վերարկուն պապաս էր գնել Արտաշատից: Նա գնացել էր, որ կարտոֆիլ, կաղամբ, մեկ էլ միս առնի: Մամաս նազուկ էր թխել ու տաք-տաք շարել էր սեղանին: Նազուկը քաղցր էր, մի տեսակ լավ համ ուներ: Ես ու պապաս սիրում էինք նազուկ ուտել: Մենք բռնում էինք կլոր նազուկի ծայրերից ու ձգում էինք: Նազուկը կիսվում էր: Ով մեծ կտոր պոկեց, նա էլ հաղթում էր: Պապաս Աղվան ձածայի մեքենայով եկավ: Երբ դարպասը թակեցին, ես վազեցի դուրս, Աղվան ձածան պապայիս հետ կարտոֆիլով ու լիքը ուրիշ բաներով լցված տոպրակները դրեց չարդախի տակ ու գնաց: Պապաս, մի տոպրակ ձեռքը, մտավ խոհանոց: Մամաս այդ ժամանակ մեծ շերեփով խառնում էր սպասը, որին պապաս թանապուր էր ասում: Պապաս հանդիսավոր բացեց տոպրակն ու հանեց վերակուն: Մամաս նայում էր մի տեսակ՝ և դժգոհ, և ժպտալով:

- Չկարողացա չառնել,- ասաց պապաս,- տես՝ ինչ սիրուն է:

- Գայանեն բնական մորթուց մուշտակ ունի,- հիշեցրեց մամաս: Բայց ջղայնացած չէր:

- Մուշտակն՝ ուրիշ, սա՝ ուրիշ,- ասաց պապաս:

Վերարկուն վանդակավոր էր: Մանր կապույտ, կարմիր ու սպիտակ վանդակներ ուներ՝ շատ մանր: Վզին կպած գլխարկ կար, որ անջատվում էր շղթայով: Աստառը կապույտ էր: Ու աստառի կտորից շալվար ուներ՝ քորոցներով վերարկուին ամրացված: Մամաս գնաց





ներս, զգեստապահարանից հանեց կապույտ սապոգներս ու կարմիր-կապույտ գծերով ժակետս: Սկզբից վերարկուին կպցրած շալվարը հագա, հետո ժակետս, հետո սապոգներս, իսկ վերջում՝ վերարկուս: Մաման գրկեց ու համբուրեց ինձ. էնքան սիրուն էի: Էս անգամ չասաց.

- Հայկ, հազար պակաս-պռատ ունենք:

Պապաս նայում էր ժպտալով: Դեմքով մեկ ժպիտ էր: Աչքերի մեջ, բերանի անկյուններում, այտերի ու ճակատի վրա....

...Պո՜ւ-չքը՜-չքը՜-չքը՜-չքը՜՝ սուլում էր գնացքը, ու ես մտածում էի, որ մենք ավելի ենք հեռանում իմ վերարկուից: Գուցե ինչ-որ մեկը կբարձրացնի վերակուս ու կդնի աթոռի վրա: Բայց, միևնույն է, վերակուս շատ կվախենա մեծ սպասասրահում, որտեղ լիքը օտար մարդիկ կան: Նա կվախենա, երբ տեսնի, որ ես կողքին չեմ, նույնիսկ մաման այնտեղ չէ: Գրպանումս՝ տոպրակի մեջ գուլուլ կոնֆետ կար: Ես էի անունը դրել գուլուլ, պապաս ու մամաս էլ էին այդ կոնֆետին գուլուլ ասում. տարբեր գույների գնդիկներ էին: Լավ էր՝ մամաս ձեռնոցներս չէր հանել: Կարմիր ձեռնոցներս, երկար ռեզինով իրար կպած, մնացին վերարկուիս թևքերի մեջ: ...Երկուսով ավելի հեշտ կլինի:

Ես իջա աթոռից ու գնացի մամայիս մոտ: Մանուշակագույն մազերով կինը ասում էր.

- Ծովն ուրիշ է, աղի ջուրը այնպես էր փափկեցրել մաշկս:

- Մամ, բա հիմա վերարկուս ի՞նչ են

անելու...,- հարցրի ես:

- Ներողություն խնդրիր, երբ ընդհատում ես մեծերի զրույցը,- ասաց մամաս:

- Ներեցեք ինձ, մորաքույր, ձեզ ընդհատելու համար,- ասացի ես ու հանկարծ լաց եղա: Անկախ ինձնից լաց եղա: Մանուշակագույն մազերով կինը քաշեց ինձ դեպի իրեն ու գրկեց:

- Ի՞նչ զգայուն երեխա է,- ասաց,- իզուր դիտողություն արեցիր, վիրավորվեց.

- Վերարկուն է կորցրել,- ասաց մամաս: Ես խոր շունչ քաշեցի, որ լացս հետ գնա:

- Ի՞նչ էիր հարցնում,- ասաց մամաս:

Ես թափահարեցի գլուխս, որովհետև էլ չէի ուզում խոսել:

- Ի՞նչ էիր հարցնում,- մամաս թաշկինակով մաքրեց արցունքներս ու համբուրեց ճակատս պապայիս նման:

- Ուզում էի իմանալ, թե ինչ է լինելու վերակուիս:

- Ինչ-որ մեկը կգտնի ու կտա մի երեխայի, որը կհագնի...

Ես հետ դարձա ու նստեցի իմ տեղը: Ուրիշ երեխա: Նա կհագնի իմ վերակուն, բայց երբեք չի իմանա, թե այն ինչպես է եկել մեր տուն: Թե ինչպես էր հայրս ժպտում ամբողջ դեմքով: Երբ կախվի նոր զգեստապահարանում, վերակուս կհիշի մեր տունը ու իր տեղը՝ մուշտակիս կողքին: Նա երբեք չի մոռանա, թե ինչպես էինք ես ու հայրս սահնակ քշում փողոցում, ու ինչպես էր հայրս փոքրիկ ձնագնդիներով խփում ինձ. կամաց էր խփում, որ չցավի, ու ծյունը փոքրիկ, սպիտակ օղակներ էր գծում վերարկուիս վրա: Վերարկուս երբեք չի մոռանա ինձ: Նա գիտի, որ ես էլ երբեք չեմ մոռանա իրեն: Մենք ոչինչ չենք մոռանա....

Ես քիթս կպցրել էի լուսամուտին: Հեռվում լույսեր էին վառվում, իսկ ճանապարհի եզրով շարված ծառերը արագ փախչում էին հետ: Ամեն ինչ մնում էր հետևում:

...Երբ վերարկուս ծերանա ու մաշվի, երբ նրան խցկեն տոպրակն ու նետեն աղբամանի մեջ ձմռան ցրտին, նա կհիշի մեր տաք տունը: Նա կժպտա, երբ հիշի, թե ինչպես էի ես թավալ տալիս ծյուների մեջ, երբ ձնեմարդ էի սարքում՝ փոքրիկ գունդը գլորելով: Այնքան էի գլորում, մինչև ահռելի փոր էր դառնում: Հետո պապաս գլուխն ու փորը դնում էր իրար վրա ու դեղին շարֆս կապում ձնեմարդու վզից: Վերարկուս կպատկերացնի, թե ինչպիսին եմ ես մեծացած: Նա անպայման կժպտա այդ ժամանակ: Որքան էլ ցուրտ լինի, կժպտա....

- Երեխան լաց է լինում,- ասաց մանուշակագույն մազերով կինը:

Մամաս բարձրացավ տեղից, եկավ դեպի ինձ, հետո մի պահ կանգնեց ու հետ դարձավ....

ԳԱՅԱՆԵ ՊՈՂՈՍՅԱՆ

ԽՈՐՀՈՒԴՆԵՐ ՀԱՅ ՄԵԾԵՐԻՑ

Միքայել **ԹԱՐԻՎԵՐԴՅԱՆ**
(1931-1996 թթ.)

«Հանրակացարանից մինչև ինստիտուտ ճմռանը ես հասնում էի «կանգառներով». վազում էի մուտքից մինչև խանութ, հետո քայլում էի մի քանի րոպե ու մտնում շենքերից մեկի մուտքը: Ցուրտ էր, իսկ ես ոչ տաք կոշիկ ունեի, ոչ վերարկու:

Մի օր, Վարովսկու փողոցի անկյունում որոշեցի տաս րոպեով թաքնվել ցրտից: Ինձ մոտեցավ անծանոթ մեկը և կանգնեց կողքիս: Մտածեցի՝ ուզում է տաքանալ ինձ պես. Մոսկվայի ցուրտը ոչ մեկի չի խնայում: Բայց անծանոթը լավ էր հագնված: Նա ինձ ասաց.

- Ուզում եմ քեզ հազար ռուբլի տալ…

- Ի՞նձ,- զարմացա ես,- մենք ծանո՞թ ենք:

- Ոչ, պարզապես, նկատեցի որ մրսում ես: Երբ երեխա էի, մի օր անծանոթ մեկն ինձ հազար ռուբլի տվեց: Այն ժամանակ ես էլ զարմացա, բայց անծանոթն ասաց. «Վերցրու, բայց պարտավոր ես վերադարձնել»: Ես ասացի, որ պետք չէ, որովհետև վերադարձնել չեմ կարող: Անծանոթն ասաց. «Ինձ չէ. մի օր դու այն կվերադարձնես քեզ անծանոթ մեկին»: Ես վերցրի գումարը և խոստացա այդպես էլ անել: Հիմա դու վերցրու, բայց մի օր, երբ արդեն հարուստ և ապահով կլինես, վերադարձրու այն անծանոթ մեկին, որը դրա կարիքը կունենա»:

Ես զարմանքից քարացել էի, ցուրտն արդեն չէի զգում: Վերցրի գումարը ու վազեցի խանութ: Ինձ համար տաք կոշիկ առա, վերարկու և փոքրիկ ճամպրուկ: Այդպես ընդունված էր ինստիտուտում. բոլոր տղաները փոքրիկ ճամպրուկներ ունեին, իսկ ես չունեի…

Տարիներ անց ես վերադարձրի այդ գումարը տասնհինգամյա մի պատանու… Բայց արդյո՞ք նա մարել է իր պարտքը՝ չգիտեմ…»:

Միքայել Թարիվերդիև
«Ես պարզապես ապրում եմ»:



Նկարում՝ **ՄԻՔԱՅԵԼ ԹԱՐԻՎԵՐԴՅԱՆՆ** ու նրա ուսուցիչը՝ Արամ Խաչատրյանն են: Թարիվերդիևն այս նկարը միշտ պահում էր գրպանում, որովհետև հագի վերարկուն և կոշիկները նոր էր գնել անծանոթից ստացած հազար ռուբլով…

ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒՄ ԵՆ

Նարեկացի արվեստի միության նկարչական խմբի սաները

Ղեկավար՝ Հասմիկ Գասպարյան



ԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ
6-րդ դաս.



ԱՐՏԱԿ ՍՏԵՓԱՆՅԱՆ
2-րդ դաս.



ԱԼԵՔՍ ՂԱԶԱՐՅԱՆ
1-ին դաս.




ՆԱՐԻ ՔԱՓԻՑՅԱՆ
4-րդ դաս.



ՀՐԱՆՏ ԱՐՇԱԿՅԱՆ
7-րդ դաս.



ՀԵՆՐԻ ՂԱԶԱՐՅԱՆ
4-րդ դաս.



ՄԱՐԿ ՔՈՉԱՐՅԱՆ
4-րդ դաս.



ՍԱԹԵՆԻԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ
3-րդ դաս.



ԱԼԵՔՍ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
5-րդ դաս.



ԼԻԱՆՆԱ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
6-րդ դաս.




ՆՈՐՎԱՐԴ ՄԿՐՏՉՅԱՆ
8-րդ դաս.




ՄԱՆԵ ՇԱԲՈՅԱՆ
6-րդ դաս.



ԴԱՎԻԹ ԱՐՇԱԿՅԱՆ
5-րդ դաս.



ԷՐԻԿ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
15 տ.



ՀԱՎԵՐԺԱԿԱՆ ԶՐՈՒՅԱԿԻՑՆԵՐ

Շարքը պատմում է հանրահայտ ստեղծագործությունների մասին, և հույս ունենք, որ օգնում է ձեզ, սիրելի՛ դպրոցականներ, ընթերցելու համար գրքեր ընտրելու հարցում: Նախորդ համարներում ներկայացրել ենք **Ջ. ՍՎԻՖԹԻ «ԳՈՒԼԻՎԵՐԻ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ», Ֆ. ՌԱԲԼԵԻ «ԳԱՐԳԱՆՏՅՈՒԱ ԵՎ ՊԱՆՏԱԳՐՅՈՒԵԼ», Մ. ՍԵՐՎԱՆՏԵՍԻ «ԴՈՆ ԿԻԽՈՏ», ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑՈՒ «ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ», ՀԵՐՄԱՆ ՀԵՍՍԵԻ «ԲԱՆԱՍՏԵՂԾԸ»** հեքիաթը, **Ֆիրդուսու «ՇԱՀՆԱՄԵ»** երկը և այլ ստեղծագործություններ:

Այժմ՝ **ՌԵՅ ԲՐԵԴԲԵՐԻ. «451° ԸՍՏ ՖԱՐԵՆՀԱՅԹԻ»:**

Ֆանտաստ գրողների շատ մտահղացումներ ու կանխատեսումներ վաղուց արդեն իրականություն են դարձել: Ամերիկացի գրող Ռեյ Բրեդբերին ժանրի բոլոր կանոններով իր պատմությունն է հյուսում: Գիտատեխնիկական հեղափոխությունը այնպիսի զարգացման է հասնում, որ հետևանքները ավերիչ են դառնում: Այն, ինչ պատկերված է վեպում, ցանկալի է, որ երբևէ իրականություն չդառնա:

Ամերիկյան մի քաղաքում ապրում են մարդիկ, ովքեր բարեկեցիկ կյանք են վարում: Աշխատում են և զվարճանում: Միայն թե այդ քաղաքում ոչ ոք չի մտածում: Հրկիզողները՝ երբեմնի հրշեջներն էլ են իրենց գործն անում առանց մտածելու: Արդեն այրել են Ուիթմենի ու Ֆոլքների գրքերը և պատրաստ են կատարելու հերթական հրահանգը:

Գայ Մոնթագի պապն էլ, հայրն էլ հրկիզող են եղել: Հպարտ կեցվածքով ու դեմքին թառած անփոփոխ ժպիտով թերևս շարունակեր անվրդով կատարել իր պարտականությունները, եթե մի օր չհանդիպեր տասնյոթամյա Քլարիսին: Աղջիկը, ի տարբերություն մեծամասնության, սիրում է քայլել անտառում, հիանալ անձրևով և հարցեր տալ: Հենց այդ հարցերից մեկն էլ՝

«Դուք երջանի՞կ եք»,


մտածմունքի մեջ է գցում Մոնթագին: Ավելի ուշ հրկիզողը սկսում է հասկանալ, որ երջանկությունը կրում էր որպես դիմակ: Իսկ աղջիկը հանեց դիմակը:

Գայ Մոնթագը սկսում է որոնել սեփական դեմքը: Փորձում է կնոջ՝ Միլդրեդի հետ շփվել, բայց ոչինչ չի ստացվում: Հեռուստահաղորդումների մեջ շարունակ խորասուզված կնոջը Մոնթագը ցավով պատմում է, որ նախորդ օրը իրենք՝ հրկիզողները, այրել են Դանտե, Սվիֆթ, Մարկոս Ավրելիոս, նրանց հետ էլ՝ մի ծեր կնոջ, ով ոչ մի կերպ չցանկացավ բաժանվել իր գրքերից:

Մոնթագը որոշ գրքեր էր փրկել: Նա այլևս չէր ցանկանում շարունակել հրկիզողի աշխատանքը և հիվանդ է ձևանում: Այդ ամենի հոտն առած հրկիզապետ Բիթին այցելում է նրան՝ բացատրելու, թե գրքերը ինչու են ավելորդ. «Երբ դպրոցները սկսեցին հետազոտողների, քննադատների, գիտնականների և արվեստի մարդկանց փոխարեն պատրաստել ավելի ու ավելի շատ վազորդներ, ցատկորդներ, ձիարշավորդներ, փիճաչիներ, գռփողներ, թալանչիներ, օդաչուներ և լողորդներ, «ինտելեկտուալ» բառը արդարացիորեն դարձավ հայհոյանք: Մարդ միշտ սարսափում է արտասովորից»: Իսկ այն հասարակությունը, որտեղ բոլոր մարդիկ պետք է դառնան միանման, գրքերի կարիք չունի: Հենց այդ պատճառով էլ հրկիզողները հանդես են գալիս գրաքննիչների, դատավորների և դատավճիռը ի կատար ածողների դերում: Այրում են գրքերը՝ մարդկանց դարձնելով երջանիկ: Իրենք երջանկության մարտիկներ են.

«Մարդկանց գլուխները լցրե՛ք անպետք թվերով, խցկե՛ք այնքան չնչին փաստեր, մինչև որ նրանց սիրտը խառնի, ոչինչ, հետո նրանց կթվա, թե շատ կրթված են: Նույնիսկ կկարծեն, թե իրենք մտածում են, առաջ են շարժվում, թեպետ իրականում դոփում են տեղում»:

Հրկիզապետն ուզում է, որ իր ստորադրյալը վերադարձնի թաքցրած գրքերը: Սակայն Մոնթագն այլևս իրեն երջանկության մարտիկ չի համարում: Մտածում է գրքերի, նրանց մեջ գրվածի և այդ գրվածը ուրիշներին փոխանցելու մասին: Բայց ինչպե՞ս: Փորձում է նույնիսկ Միլդրեդի և հարևանուհիների համար բանաստեղծություն կարդալ: Բայց բռնությամբ ոչնչի չես հասնի: Կինն ու հարևանուհիները մատնում են նրան: Չերբակալված Մոնթագը հրկիզապետի հրահանգով ստիպված է լինում այրել հայտնաբերված գրքերն ու սեփական տու-



նը: Միայն թե Մոնթագը հեշտ հանձնվողներից չէր: Նա հասկանում է, որ այս քաղաքակրթությունը դեպի կործանում է գնում, մեկը պիտի պատրաստ լինի կառուցելու, երբ ամեն ինչ փլվի: Նա դառնում է հենց այդ մեկը: Այս անգամ այրում է ոչ թե գիրք, այլ հրկիզապետին և կարողանում խույս տալ հետապնդումից:

Մոնթագը միանում է քաղաքից դուրս ապրող թափառաշրջիկներին և ճշտում իր հետագա քայլերը: Թափառաշրջիկները նախկին գիտնականներ ու պրոֆեսորներ են: Նրանք գիտեն, որ գիրք պահելը վտանգավոր է: Բայց ելքը գտել են. ամեն ինչ պահել են գլխի մեջ՝ գրականություն, պատմություն, միջազգային իրավունք. «Մեր խնդիրն է պահպանել մեր գիտելիքները, ու քանի դեռ մեզ պետք են գալու, պահպանել անխաթար վիճակում»: Իսկ եթե մարդիկ չցանկանան իրենց լսել, ստիպված կլինեն համբերությամբ սպասել, մինչև գա բաղձալի օրը. «Նրանք պետք է իրենք հասկանան և իրենք մտորեն, թե ինչու այդպես եղավ, ինչու պայթեց աշխարհը իրենց ոտքերի տակ: Այդպես չի կարող հավերժ շարունակվել»: Նրանք խոսում էին պատերազմի մասին, պատերազմ, որ տևեց ակնթարթներ՝ քաղաքից թողնելով ընդամենը մի բուռ մոխիր:

Այս մարդիկ՝ քայլող գրքերը, շարժվում են գետի հոսանքն ի վեր: Նրանք ասելիք ունեն. «Մենք մեզնից ոչինչ չենք ներկայացնում, ոչ թե մենք ենք կարևոր, այլ այն ամենը, ինչ կրում ենք մեր մեջ: Երբևէ դրանք անպայման պետք կգան մարդկանց»: Նրանց միացած Մոնթագը նույնպես ասելիք ունի: Զարմանքով զգում է, որ իր գլխում վերականգնվել է այն, ինչը թվում էր, թե մոռացվել է՝ կարդացած գրքերը: Նա սկսել էր մտածել և հասկացել էր ամենակարևորը. գիրք այրելը հանցանք է, բայց ավելի մեծ հանցանք է գիրք չկարդալը:

ԱՐԹՈՒՐ ԻՍՐԱՅԵԼՅԱՆ

ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒՄ ԵՆ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԸ



ԷԼ Ի՞ՆՉ ՈՒՆԵՄ ԿՈՐՑՆԵԼՈՒ

Ու կրկին՝ վերադարձ, սակայն այլ «Ես»-ով,
Ու կրկին՝ զղջում, բայց արդեն անիմաստ,
Ու կրկին՝ ավերակ, և էլի ես՝ կանգնած…
էլ ի՞նչ ունեմ կորցնելու:

Ու կրկին՝ ցավի ճիչ՝ փակված կոկորդում,
Ու կրկին՝ լաց՝ խառնված արյունով,
Ու կրկին՝ հիշողություններ՝ մնացած անցյալում…
էլ ի՞նչ ունեմ կորցնելու:

Ու կրկին՝ դու, իմ հայրենիք,
Ու կրկին՝ վարսերդ խոնարհված,
Ու կրկին՝ ողբդ ծանր, անասելի…
էլ ի՞նչ մնաց կորցնելու:

ՀԱՅՐԵՆԻՔ

Քո լռությունը, հայրենի՛ք,
Իմ ականջներն է խլացնում,
Քո ողբի ճիչը, հայրենի՛ք,
Իմ սրտից է արցունք քամում:

Հզորությունդ՝ գետնամած,
Հե՛նց քո կոկորդն է բզկտում,
Անզորությունը՝ քո քնած
Զավակներիդ հոգում ապրում:

Թող թևերը քո վնասված
Նկարեմ ես զգուշությամբ,
Որ թևածես ազատությամբ,
Շարունակվես՝ հպարտությամբ:

ՓԱԿՎԱԾ

Խավարում փակված՝
Ամուր շղթայով
Կապկպված ես դո՛ւ՝,
Մայրենի լեզու:

Զրկված զավակից՝
Օտարին գերի,
Պատառոտված ես դո՛ւ,
Խոցված հայրենիք:

Արդեն մոռացված,
Անհասկանալի,
Հանգչում ես հանդարտ,
Հայրենասիրություն:

ԾՈՎԻՆԱՐ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ
Արագածոտնի մարզ, Գևորգ Չաուշի անվան դպրոց,
10-րդ դաս.

ՏԵՂԱՇԱՐԺՈՒՄ ԵՆ

Մասիսի գեղարվեստի դպրոցի սաները

Տնօրեն՝ Շուշանիկ Վարդանյան



ՄԱՐԻԱ ՄԿՐՏՉՅԱՆ
11 տ.



ՆԱՏԱԼԻ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ, 13 տ.



ՄԱՐԳԱՐԻՏԱ ԱՎԵՏԻՍՅԱՆ, 10 տ.



ԷԼՄԻՐԱ ՂԱԶԱՐՅԱՆ
14 տ.



ՆՈՐԱ ԵՊԻՍԿՈՊՈՍՅԱՆ
13 տ.



ԱՐՍԵՆ ՀԱՐԱՉՅԱՆ
10 տ.



ԱԳԱԹԱ ԱՌԱՔԵԼՅԱՆ
8 տ.



ՍԵՐԳԵՅ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
8 տ.



ԱՐԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ
10 տ.



ԱՐՓԻ ԱՐԻՍՏԱԿԵՍՅԱՆ, 9 տ.



ԱՐՓԻ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ
5 տ.



ԴԻՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ
9 տ.




ԱՆԱՀԻՏ ԴԱՎԹՅԱՆ
14 տ.



ԱԼԵՔՍ ՆԻԿՈՂՈՍՅԱՆ
12 տ.

ԱՂՎԵՍԸ



Աղվես էկավ լանջիկ-մանջիկ,
Ոտներ վազան կարճիկ-մարճիկ:
Վա՛յ, իմ չալիկ, չալմալալիկ,
Խոր-խորոտիկ, չալմատոտիկ,
Տըմբըլաճակատ, տըռճիկ-մըռճիկ,
Փամփլիկ ճըտեր, վո՛ւյ, վո՛ւյ,
Ձի կերցուցի[1] անուշ կուտիկ,
վո՛ւյ, վո՛ւյ:

Աղվես նըստեր դարու գըլխուն,
Աչքեր գըցեր չաղ վառըկուն:
Աղվես կասի՝ իմ տեղ նեղ ի,
Հավու ճըտեր փորուս դեղ ի:
Վա՛յ, իմ չալիկ...

Աղվես գընաց մըտավ ջաղաց,
Թաթեր վերուց, մի բոլ խաղաց:
Անուշ կուտիկ, վո՛ւյ, վո՛ւյ:
Վա՛յ, իմ չալիկ...
Տղա, Ավագ, հասի մարագ,
Ես քե կիտամ մեղր ու կարագ:
Վա՛յ, իմ չալիկ...

Ճուտըմ ունեմ ի հիշատակ,
Աղվես տանի, մընամ դարտակ:
Վա՛յ, իմ չալիկ...
Աղվես էկավ տափիկ-մափիկ,
Քանց մեր կատուն՝
սուսիկ-փուսիկ:
Վա՛յ, իմ չալիկ...

էկավ մըտավ մեր մարագիկ,
Հավու ճըտեր արավ խորտիկ:
Վա՛յ, իմ չալիկ...



[1]Ձի կերցուցի - ձեզ կերցրի

ՀՆՉՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՃԸ

Հայերենի ձայնավոր ու բաղաձայն հնչյունները հաճախ էին վիճում: Չգիտես ինչու, բաղաձայններն սկսել էին մեծամտանալ, պարծենում էին, որ հինգ անգամ շատ են ձայնավորներից, ուժեղ թիմ են ու ոչնչից չեն վախենում:

Այդպիսի մի վեճի ժամանակ ձայնավորները սուսուփուս նայեցին իրար, հետո մեկն աչքով արեց, ու բոլորն աննկատ դուրս եկան բառերի միջից: Եվ ի՞նչ. նույն պահին խառնաշփոթ առաջացավ. մնացած հնչյունները գոռգոռում ու չէին հասկանում իրար, աղմուկից բացի՝ ոչինչ չէր լսվում: Մարդիկ, բառերը կորցրած, աջ ու ձախ էին գնում, ոչինչ անել չէին կարողանում:

Գրտխտկ, շկրտ, հյրնք, րկր, գրք, հղթնկ.... Դե արի ու բան հասկացիր:

Բաղաձայնները հասկացան, որ անտեղի են պարծենում, առանց ձայնավորների իրենք բառեր չեն դառնում մարդկանց բերանում: Եվ պատգամավոր ուղարկեցին վեց հնչյունների մոտ.

- Վերադարձե՛ք. ճիշտ է, դուք քիչ եք, բայց շա՛տ մեծ ուժ եք:

Ու կնքվեց հաշտության դաշինք:

ԱՐԱՄ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ, 6-րդ դաս.

ՕԳՆՈՒԹՅՈՒՆ

Ձմռան մի օր՝ ճաշի ժամին, ձայնավոր ու բաղաձայն հնչյունները նորից սկսեցին վիճել, թե ով է իրենցից ավելի կարևոր: Երկար վիճեցին, բայց էլի արդյունքի չհասան: Հաջորդ օրը, երբ արդեն մթնել էր, մի քանի բաղաձայն տուն վերադառնալիս փոսն ընկան: Փորձեցին դուրս գալ, չկարողացան: Ուզեցին ձայն տալ, օգնություն կանչել, բայց ոչինչ չէր հասկացվում, լսվում էր միայն՝ գ, թ, յ, ն... Ամբողջ գիշերն անցկացրին ցուրտ ու խոնավ փոսի մեջ:

Առավոտյան այդ կողմերով անցնում էին ձայնավորները:


Ա՛, օ՛, ու՛, ի՛, է՛, ը՛...

Նրանք այնպես ուրախ էին, երգում էին: Փոսի հնչյունները լսեցին նրանց երգը ու ամբողջ ուժով ձայն տվեցին:

Ձայնավորները մոտեցան փոսին, նայեցին, հասկացան ամեն ինչ, խղճացին իրենց ընկերներին ու թռան փոսը: Նրանք կազմեցին «օգնություն» բառը և դուրս եկան փոսից:

Այդ օրվանից հաշտվեցին ու էլ չեն վիճում:

ԱՆՆԱ ԶԱՔՈՅԱՆ, 6-րդ դաս.



ՊԱՊԻԿՆԵՐԻՍ

Փոքրիկ էի ես, գրկում էի ձեզ,
Իսկ հիմա ձեր կարոտն ինձ հանգիստ
չի տալիս,
Երանի՜ ժամանակը ետ գնար նորից,՛
Արթնանայի ու ձեզ տեսնեի կողքիս…
Իմ սրտի, հոգու տերն եք, պապիկնե՛ր,
Ինչո՞ւ այդպես շուտ հեռացաք ինձնից:
Սիրում եմ ես ձեզ, անչափ կարոտում,
Ձեր պատկերը միշտ ապրում է իմ հոգում,
Ու սրտիս երգը ձեզ եմ նվիրում:

ՄԱՐԻ ՏԻԳՐԱՆՅԱՆ, 6-րդ դաս.



ԱՐԱՄ ԱՎԵՏՅԱՆ, 3-րդ դաս.

ԱՄԵՆԱԵՐՋԱՆԻԿԸ

Երջանիկ պահը մարդու կյանքի մի
ակնթարթն է:
Մանչուկ, որ ջինջ երկնքի տակ
Խաղաղ ու զմրուխտ դաշտերում
վազում է,
Ամենաերջանիկն է…

Վաճառական, որի առևտուրը
հաջող է անցնում,
Ամենաերջանիկն է:

Թռչուն, որ իր օրվա հացի փշուրն
է ստանում,
Ամենաերջանիկն է…

Հայրենասեր մի մարդ, որ նայում է
իր երկրի խրոխտ լեռներին,
Ամենաերջանիկն է…

Տատիկ, որ իր թոռան ժպիտի
քաղցրությունն է վայելում,
Ամենաերջանիկն է…
Որդուն պատերազմ ուղարկած
մայր՝
Ջավակին կրկին գգվելիս,
Ամենաերջանիկն է…

ԲԻԱՆԿԱ ՂԱՋԱՐՅԱՆ, 7-րդ դաս.

ԴԱՍԵՐ ՈՒ ԴՊՐՈՑ

Առավոտ է, ու նորից սկսվում են
դասեր.
Գիրք ու տետրս բաց են,
գրչատուփս՝ պատրաստ:

Ուսուցիչը խոսում է լուրջ ու
խստորեն,
Իսկ ես երազում եմ հրաշքներ,
արկածներ:

Դասը երկար է, կատակներն են
մեզ փրկում,
Ժամանակն է ասես կանգնում, երբ
այլևս չենք դիմանում:

Ահա փրկիչ զանգը, թռչում ենք
մենք ուրախ,
Դպրոցն ազատ թողեց մեզ, դե՛,
շուտ վազենք մենք բակ…

ՏԱԹԵՎ ՇԱՀՈՒՄՅԱՆ, 6-րդ դաս.

ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՆԵՐԸ

Վերջերս մի սիրուն դրվագ եղավ, որի շնորհիվ քանի օր է մտածում եմ, թե ինչքան շատ է պետք խոսել երեխաների հետ ու երբեմն անգամ ակնհայտը մեկնաբանել:

Մի գեղեցիկ միջավայրում էի, իմ դիմաց՝ մոտ ինը տարեկան 20-30 երեխա: Զրուցում էինք ընկերությունից, մեծահոգությունից, հասանք մի կետի, երբ հարցրի՝ ի՞նչ են կարծում՝ ի՞նչ է խաղաղությունը կամ ինչպիսի՞ն են պատկերացնում այն: Մի քանի րոպե լռություն տիրեց: Հետո լռությունը խախտվեց. տղաներից մեկը թղթե ինքնաթիռ էր պատրաստել. թռցրեց, մյուսները փայլուն աչուկներով հիացան, կեսը կչկչաց, կեսն էլ մանկական անմեղ ու սիրուն ժպիտներով սկսեց խաղալ ինքնաթիռով: Ու այս խաղաղ աղմուկի մեջ մի սիրուն աղջիկ կանգնեց, որպեսզի պատասխանի հարցիս, թե ինչ է խաղաղությունը: Խոսքը բերանից առա, նայելով մյուսներին ու թղթե ինքնաթիռին՝ հարցրի.

- Ի՞նչ ես կարծում, սա խաղաղությո՞ւն է:

Թեքվեց, նայեց ընկերներին, խնամքով թաքցնելով դեմքի դըժգոհ արտահայտությունը՝ պատասխանեց.

- Ոչ: Խաղաղությունը...

Նորից ընդհատեցի.

- Հապա ուշադիր նայիր, սա խաղաղությու՞ն է:

- Չէ, սա աղմուկ է, ոչ թե խաղաղություն:

Խնդրեցի, որ բոլորը լռեն, ու այդ պահին նա ասաց.

- Այ, սա խաղաղություն է:

- Ոչ, սա լռություն է, ոչ թե խաղաղություն:

Զարմացած նայեց ինձ: Երկուսս էլ լռեցինք: Լռությունը նորից խախտվեց թղթե ինքնաթիռով: Նայեցի ինքնաթիռի թռիչքին հետևող չարաճճի աչուկներին, ժպտադեմ հայացքներին: Մի մասն սպասում էր վայէջքին, որ արագ վերցնի ու ինքն էլ թռցնի, մի մասն էլ ծիծաղում էր չստացված թռիչքների վրա: Ես ու կանգնած աղջնակն էլ սպասում էինք. ինքն սպասում էր, որ լռեին, ես՝ չլռեին: Չդիմացավ ու բարձր հարցրեց.

- Բա էդ դեպքում խաղաղությունը ի՞նչ է:

- Գիտե՞ս, բոլոր կապույտ երկինքները չէ, որ խաղաղ են: Խաղաղությունը միայն լռությունն ու ծիտիկի ծլվլոցը չեն: Մենք հիմա Խաղաղություն պիտի փնտրեք, բացի կապույտից, նաև այլ գույների մեջ, նաև լռություններից դուրս՝ երեխաների ժխորի մեջ: Իսկ իմ ու քո շուրջն ստեղծված այս աղմուկը աշխարհի ամենասիրուն խաղաղության տեսքն ունի: Ու ես ուզում եմ, որ ձեր մանկությունը միշտ այս տեսքն ունենա, ու ձեր կչկչան աղմուկը ոչ մի լռություն չընդհատի:


- Այսինքն՝ միշտ չէ, որ լռությունը խաղաղությու՞ն է:

- Այսինքն՝ գեղեցկուհիս, եթե բոլորը նույն կողմ են նայում, միշտ չէ, որ բոլորն էլ նույն բանն են տեսնում. դու տեսար աղմուկ, ես՝ խաղաղություն, դու տեսար խաղաղություն, ես՝ լռություն: Որովհետև երկուսիս էլ փոքր ժամանակ սովորեցրել են, որ խաղաղությունը կապույտ երկինքն ու ծիտիկի ծլվլոցն են: Բայց արժեքներ կան, որ իրականում անձն են և անգույն կամ էլ ունեն շատ ձևեր ու գույներ:

Ու սիրո նման՝ խաղաղությունն էլ ունի արտահայտվելու, դրսևորվելու հազար ու մի ձև:

ԹԱՄԱՐԱ ՀԱԿՈԲՅԱՆ,
Երևան, հ.180 հիմնական
դպրոցի ուսուցչուհի

ԳԻՏԵ՞Ք, ՈՐ...



Ֆրանսիացի նշանավոր նկարիչ Պաբլո Պիկասոյին շատերը գիտեն: Սակայն հանրահայտ նկարչի լրիվ անունը թերևս քչերին է հայտնի՝ Պաբլո Դիեգո Խոսե Ֆրանցիսկո Դը Պաուլա Խուան Նեպոմուքենո Քրիսփինո Դե Լա Թրինիդադ Ռուիզ ի Պիկասո: Բանն այն է, որ Պիկասոն ծագումով իսպանացի է, իսկ իսպանացիները շատ են սիրում անունների այսպիսի առատություն:



«Օսկար» մրցանակը ԱՄՆ-ում շնորհվում է լավագույն ֆիլմերին, դերակատարներին, ռեժիսորներին, սցենարիստներին և ֆիլմին առնչվող այլ մասնագետների: Բայց ո՞վ է այդ Օսկարը: Հատուկ մրցանակի համար պատրաստված փոքրիկ արձանիկը առաջին անգամ տեսնելով՝ կինոյի ամերիկյան գրադարանավարուհի միսիս Մարգարեթը բացականչեց. «Ի՜նչ նման է իմ հորեղբայր Օսկարին»: Եվ այդ անունով էլ կնքվեց մրցանակը:



Ամենաթանկ կետադրական սխալն արվել է ԱՄՆ-ում՝ 1962 թ. նոյեմբերին: Հաշվիչ մեքենայի ծրագրում բացթողում կատարելու հետևանքով Քենեդիի հրվանդանից դեպի Վեներա թռչող տիեզերանավը հարկադրված եղան պայթեցնել:



Գերմանացի գիտնական Գ. էրբենը դինոզավրերի ոչնչացումը բացատրում է դրանց՝ զարգացման վերջին փուլում շատ հաստ կեղև ունեցող ձվեր ածելու ենթադրությամբ: Ջագերը չէին կարողանում ջարդել կեղևը և դուրս գալ լույս աշխարհ: Դինոզավրերի ածը խիստ կրճատվեց: Բայց ինչո՞ւ կեղևը հանկարծ հաստացավ:

Տակավին դպրոցական էր չիլիացի Նեֆթալի Ռեյեսը, երբ քաղաքային թերթում երևացին նրա առաջին բանաստեղծությունները: Նա դրանք վախեցավ տպագրել իր իսկական ազգանունով, հայրը շատ խիստ մարդ էր և անպայման կասեր. «Ահա թե ինչու ես մաթեմատիկայից «երկու»-ներ ստանում»: Պատանին որոշեց որպես ծածկանուն վերցնել իր սիրելի գրող 19-րդ դարի չեխ դասական Յան Ներուդայի ազգանունը: Հետագայում աշխարհն ունեցավ ևս մեկ դասական գրող՝ Պաբլո Ներուդա:





Անգլիացի գիտնական Չարլզ Դոջսոնը մաթեմատիկայի դասախոս էր, այնպես որ, երեխաների համար հեքիաթների հորինումը բոլորովին էլ նրա առաջնահերթ զբաղմունքը չէր: Ահա թե ինչու գիտական աշխատությունները նա տպագրում էր իր իսկական անունով, իսկ իրեն համաշխարհային փառք բերած գրքերը՝ հրաշքների աշխարհում Ալիսայի արկածների մասին, Լյուիս Քերոլ կեղծանունով:

ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒՄ ԵՆ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԸ

ՍԵՎ ՈՒԺԵՐՆ ԵՎ ՉԱՐՔԵՐԸ ԼՑՎԵՑԻՆ ԴԱՍԱՐԱՆ

Ուսուցչուհին ոգևորված ներկայացնում էր դասը՝ «Սասունցի Դավիթ» էպոսը: Պատմում էր դիպաշարը՝ մեջբերումներ կատարելով բնագրից, մեր ուշադրությունը հրավիրելով երգվող հատվածների վրա…

Բայց դասարանի աշակերտների մի մասը սավառնում էր յոթերորդ երկնքում, մի մասը կա՛մ այլ առարկաների տնային աշխատանքների մեխանիկական արտագրություն էր անում, կա՛մ խոսում: Մի խոսքով, դասը նման էր մոնոթատրոնի, որտեղ մենակատար-դերասանն ուսուցչուհին էր, իսկ «հանդիսատես» չկար: Մեկ էլ ականջիս հասավ ուսուցչուհուս ասմունքի ձայնը.

«Կտրեց քառսուն ջաղացի քար….
…Ու յոթ գազ էլ մտավ գետին,
Գնաց հասավ սև ջուր»:

էլ չհասցրեց ասել. «Թե հրեշտակ իր թև չառներ առջև…», սև ուժերն ու չարքերը՝ այլանդակ կերպարանքներով ու վայրենի աղաղակներով, լցվեցին դասարան…

Մղձավանջային երազում անգամ նման իրարանցում չէի պատկերացնում: Ուսուցիչներն էին դրանց թիրախում. ծաղրում էին, միմոսություն անում, նվաստացնում… իսկ մեր ամեն մի անմիտ արտահայտությունից և անպատկառ արձագանքից դրանք էլ ավելի էին շատանում ու ակտիվանում՝ սպառնալով արդեն մեզ:

Չեռքի տակ ինչ ընկնում էր, նետում էինք դրանց վրա, բայց…ապարդյուն:

Որոշ ժամանակ անց նկատեցի, որ դրանք թուլանում են, երբ դասագրքերով ենք հարվածում և ինքնաբուխ կրկնում ենք ուսուցիչներից լսած խոսքերն ու արտահայտությունները…

Հիշեցի ուսուցչուհուս խոսքերը. «Տգիտությունը չարիք է ծնում»: Մտածեցի, որ դրանք մեր ծուլության, անտարբերության ու տգիտության ծնունդն են: Ոգեշնչվելով Սասունցի Դավթի կերպարով՝ կանգնեցի նստարանին ու բարձր կանչեցի.



- Ով քնած է, արթու՛ն կացեք:
Ով չի լսում, զգաստացե՛ք:
Սթափվե՛ք, ելե՛ք այս թմբիրից,
Զինվենք խելքով, գիտելիքով,
Դառնանք զինվոր հայրենիքի՝
Անպարտելի, անխոցելի…

Այս էր… տիրեց մի խորհրդավոր լռություն: Առիթից օգտվելով՝ բոլորին ասացի, որ բացեն դասագրքերն ու ոգևորված կարդան դասը:

Օ հրաշք, այդ բոլոր չարքերը հերթով պայթում էին օճառաջրի պղպջակների պես: Մեր ուրախությանը չափ ու սահման չկար: Մենք հաղթեցինք:

ԴԱՎԻԹ ՄՐՅԱՆ,
Շիրակի մարզ,
Գյումրիի հ. 6 հիմն. դպրոց,
8-րդ դաս.

ՀԵՏԱՔՐՔՐԱՍԵՐԻ ԷՋ

ՎԱՅՐԿՅԱՆՈՒՄ ՄՈՏ 100 ԿՄ

Պլազմային շարժիչի շնորհիվ դեպի Կարմիր մոլորակ՝ Մարս, թռիչքը կարող է տևել ընդամենը մեկ ամիս:

Նախատիպն արդեն կառուցվել է, սակայն որոշ փորձագետներ թերահավատորեն են վերաբերվում տեխնոլոգիային:

Վերջերս հայտնի դարձավ, որ Ռուսական նորարարական և ջերմամիջուկային հետազոտությունների ինստիտուտի գիտնականները մագնիսապլազմոդինամիկական շարժիչ են մշակել, որի շնորհիվ տիեզերանավը կարող է Մարս հասնել մեկ ամսվա ընթացքում: Առայժմ դեպի Կարմիր մոլորակ ուղևորության համար պահանջվում է 6-9 ամիս:

Նոր պլազմային շարժիչը նախատեսված է մագնիսական դաշտերի միջոցով ջրածնի լիցքավորված մասնիկների մինչև 100 կմ/վրկ (360 000 կմ/ժ) արագության համար:

Այրվող վառելիքով սովորական հրթիռների արագության սահմանը մոտ 5000 մ/վ (18000 կմ/ժ) է:

Պլազմային շարժիչն արդեն օգտագործվում է տիեզերական առաքելություններում, օրինակ՝ արբանյակների համար: Չնայած այս տեսակի շարժիչը ապահովում է մշտական արագացում, այն այնքան էլ հզոր չէ: Ռուսական շարժիչը կաշխատի միջուկային ռեակտորով:

Պլազմային շարժիչներն ի սկզբանե շատ արդյունավետ են, քանի որ դրանք գրեթե էներգիա չեն կորցնում: Հետազոտողների կարծիքով՝ նոր շարժիչի մղումը պետք է լինի 6 նյուտոն:

Այնուամենայնիվ, տարածության վակուումում նման մեծ մղում պետք չէ. ամենակարևորն այն է, որ այն կարող է շարունակաբար օգտագործվել: Հաղթահարելով ձգողականությունը՝ տիեզերանավը պլազմային շարժիչի միջոցով կարող է անընդհատ արագացնել արագությունը: Այնուամենայնիվ, դեպի Մարս ճանապարհորդությունը կտևի մեկից երկու ամիս՝ կախված տիեզերանավից և նրա ծանրաբեռնվածությունից: Ռուս հետազոտողները իրենց լաբորատորիայում արդեն կառուցել են 300 կիլովատ հզորու-

թյամբ նախատիպ: Այն արդեն մի քանի փորձարկում է անցել:

Շարժիչի աշխատունակությունը փորձարկված է. արդեն ապացուցված է, որ այն ավելի քան 2400 ժամ է, ինչը բավարար է Մարս առաքելության համար:

Շարժիչը թռիչքի համար պատրաստ կլինի մինչև 2030 թվականը:

Այնուամենայնիվ, որոշ փորձագետներ այս ամենին վերաբերվում են որոշ թերահավատությամբ: Որպեսզի շարժիչն իրականում աշխատի, այն պետք է ներդրվի տիեզերանավի մեջ: Բացի պլազմային շարժիչից՝ տիեզերք մեկնելու համար տիեզերանավից պահանջվում է ունենալ նաև սովորական ջերմային կամ քիմիական շարժիչներ:

Ռուս հետազոտողներից բացի՝ ամերիկացիները նույնպես նպատակ ունեն հնարավոր դարձնել դեպի Մարս ճանապարհորդությունը կրճատել-դարձնել երկու ամիս:

Չինաստանը նույնպես աշխատում է դեպի Մարս ճամփորդությունը կրճատել-հասցնել երեք ամսի:







4000-ԱՄՅԱ ՍԱՅԼԸ

Կաղնու փայտից այս սայլը, որը մոտ 4000 տարեկան է, պեղվել է Սևանա լճի մոտակայքում գտնվող Լճաշեն գյուղի մոտակայքից: Այն ճանաչվել է որպես գոյություն ունեցող ամենահին անիվավոր մեքենաներից մեկը: 1950-ականների հնագիտական ձեռնարկների ժամանակ ի հայտ եկած այս գտածոն ներկայումս ցուցադրվում է Հայաստանի պատմության թանգարանում: Սայլի պահպանվածության աստիճանը թույլ է տալիս պատկերացում կազմել հին քաղաքակրթությունների փոխադրման մեթոդների, միջոցների և ընդհանրապես արհեստագործության մասին:

200 ՏԱՐՎԱ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՄԱՐՏԿՈՑ

Անհավատալի է, բայց ...:


Բաղդադի թանգարանը առանձնացնում է այս զարմանալի մասունքների տասնյակը, ամենահինը: Այո, ճիշտ է, ավելի քան 2000 տարի առաջ ինչ-որ մեկը մարտկոց էր պատրաստել:

Այն հայտնաբերվել է 1936 թվականին Բաղդադի մոտակայքում:

Այս հրաշալիքը, որը հայտնի է «պարթևական մարտկոց» անվամբ, ունի բարդ տեսք՝ կերամիկական տարա, մետաղական ձող, երկաթե լայնեզր գլխարկ: Երբեմն այն լցվում է թթու հեղուկով, կարող է մոտ 2 վոլտ էլեկտրական էներգիա առաջացնել, ինչպես ածխածնի և ցինկի այսօրվա մարտկոցները:

Բաղդադի այս մարտկոցի ծագումն ու օգտագործման նպատակը մնում են առեղծված: Ոչ մի հնագույն տեքստ չի բացահայտել, թե ով է ստեղծել այն, ինչու է կառուցել:

Պատմության տարեգրության մեջ ոչինչ չի համեմատվի Բաղդադի մարտկոցի հետ: Ո՞ր հնագույն քաղաքակրթությունը կարող էր նախագծել և ստեղծել այս ինքնօրինակ մարտկոցը:



ԽԱՉԲԱՌ


ՈՒՂՂԱՀԱՅԱՑ

1.Թաղամաս Երևանում: 2.Ճանաչված երգչուհի .... Գրիգորյան: 3.«Ոսկե... կինոփառատոն: 4.Ականի, արկի որոտ: 7.Նշանավոր պատմիչ ... Քանաքեռցի: 8.Բասկետբոլի թիմ Հայաստանում: 10.Հայ անվանի կոմպոզիտոր Արամ... 11 Վայոց ձորի մարզկենտրոնը: 15 Փառքի...: 16 Եվ գայլը, և առյուծը: 19.Բանաստեղծության տեսակ: 22.Հրաբուխ Եվրոպայում Լիպարյան կղզիներում: 23. Ձմեռ պապ.... Կլաուս 24.Ճանաչված երգչուհի Լոլա...28.Մարդկանց խուռն բազմություն: 29.Կխտար, վիթ, եղնիկ, եղջերու:

ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ

5.Դպրոց, համալսարան: 6.Բեյրութ: 9.Հայաստանի մայրաքաղաքներից: 12. Հայ անվանի նկարիչ՝ ծնված Շիրակի մարզի Ջաջուռ գյուղում: 13. ՀՀ մարզ: 14.Կավե զանգված, որ ծառայում է որպես շինարարական քար: 17.Նավթից կամ տորֆի ու քարածխի չոր թորումից ստացվող մոմանման սպիտակ կամ դեղնավուն նյութ: 18.Հրազդան...: 20. «Մուսա լեռան 40 օրը» վեպի հեղինակը....Վերֆել: 21.Կաթոլիկ,...: 25.Բժշկական աշխատող: 26.Արևելքում կանայք դրանով ծածկում են դեմքը: 27.Բանկին վճարվող գումարը: 30.Նիդեռլանդներ: 31.Ջինատեսակ: 32.Արաքս, Եփրատ... :

Կազմեց՝ **ՀՈՎՀԱՆՆԵՍ ՍԱՐԳՍՅԱՆԸ**



Խաչբառի պատասխանները

ՈՒ.Ղարա-
ԽՎի: 2.Ռուսիկ: 3.Փղոսկր:
4.Պայթյուն: 7.Շուրթ:
8.Էջմիածին: 10.Ղուկաս:
11 Եղեգնաձոր: 15 Պարիսպ:
16 Գայլեցի: 19.Երգեցողություն:
22.Ստրոմբոլի: 23. Սուրբ
24.Հոսկե: 28.Ալբիոն:
29.Պարոն:

ՏՅԵՊԱՆՆԱՅԻ 1.Ղարա-
ժամը: 2.Ռուսիկ: 3.Փղոսկր:
4.Պայթյուն: 7.Շուրթ:
8.Էջմիածին: 10.Ղուկաս:
11 Եղեգնաձոր: 15 Պարիսպ:
16 Գայլեցի: 19.Երգեցողություն:
22.Ստրոմբոլի: 23. Սուրբ
24.Հոսկե: 28.Ալբիոն:
29.Պարոն:

ԱՂԲՅՈՒՐ

Մանկապատանեկան ամսագիր



ՆԱՐԵԿԱՑԻ
ԱՐՎԵՍՏԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ

www.naregatsi.org